

Ch. Chubijew

Chubijew by myself

10/18/24 1909/0-

891.99

Ch-13

1001-32

891-93

April 11, 1961

$$y_1 = 13$$

ЧИСЛЫ НУМЕР

4915

30/01/81

VII C-4366

10/881

ԱԽՈՐԻ - ՀԱՅՐԱԿԻ ԱՐԴՅՈՒ
ԲՈՅԱԳՐԱՎՈՒԹՅՈՒՆ
ԱԼԵՎՈՒՐՈՒ ԱՎԱՐԱՐ

ԱՆԿՈՇ ՀԻՒՐ

Գիշե ՄԻ ԴԱՐՁԱԳԱՅԻՆՔԵՐ

ԹԵՐԺԻ

Տպարան «ՊՐՈՖՐԵՇ» | Տպարան «ՊՐՕՊՐԵՍ»
Վելմուստին, 7

1909

891.99
Q-13

06 DEC 2010

ЕВ 2005

ԱՐԵՎԱՆԻ ԱՐԵՎԱՆ

891.992

IX-11.2-13

միք.

ՀԱՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԽԱԿԱՆ ԲԻBLIOTECHE
7/11. 1922

ԱՆԿՈՇ ՀԱՅ



ԳԻՒՄ ՄԻ ԴԱՐՁԱՊԻԹԵՑՄԻ

100 | 52

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
առողջապետութիւն և կր
օհութան և զարգացնելը
18 նոյեմ. 1918 թ, ԹԻՖԼԻՍ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՊՐՕԳՐԵՍ» Հնկ. | Տպոգրաֆія Т-ва «ПРОГРЕССЪ»,
Ведельминовская, 7.

1909

Настоящая пьеса, подъ заглавием «Незваный гость» сочинение А. Абеляна, разработана Памфетникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представления на сценахъ края.
16 июня 1909 г. гор. Тифлисъ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՏԻԳՐԱՆ ԿՐԻՍՏԱՆԱՐԴ:

ՄԱՆԱՆ ՆՐԱ ԿԻՆԸ:

ԲՕԲՈ ԱՐԱՆց ՃԱռան:

ԱՐՇԱԿ ԱՐԱՆց ՀԻւրը,

ՆԻԿՈԼ ԹՐԱՆԳ ՆԻԿՈԼ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ, Բօրօյի
բարեկամը:

ՇԱՔԱՐ Կամ Շաքրո, մսամորթ:

Տեսարանը ներկայացնում է մեծ եւ շքեղ սեղանատուն. ամեն մի պատի վրա մի-մի դրու. Զախ կողմը թէյի պատրաստի սեղան, աջ կողմը փոքրիկ սեղան, սրանց շուրջը աթոռներ, բուֆէտ եւայլն:

ՏԵՂԻԼ 1.

ՏԻԳՐԱՆ, ՄԱՆԱՆ յետոյ ԲՈԲՈ

ՄԱՆԱՆ.—Ա՛ն, Տիգրան, ինչ լկոի և անհրես ազգական ես ունեցել:

ՏԻԳՐԱՆ.—Մի յանդիմանիլ ինձ, Մանան,
բաւական է:

ՄԱՆԱՆ.—Ինչո՞ւ ես անամօթի մէկին խոթել իմ տուն, իսկ ինքդ բերանդ ջուր առել նստել:

ՏԻԳՐԱՆ.—Հօ տեսնում ես, որ կոկորդովով թէյ չի գնում:

ՄԱՆԱՆ.—Դու քո ազգականիդ բնաւորութիւնը չէիր իմանում, երեք շաբաթ էլ հիւր:

ՏԻԳՐԱՆ.—Միթէ ես եմ հրաւիրել:

ՄԱՆԱՆ.—Եթէ զու չես հրաւիրել, ինչո՞ւ ես ձեռքդ վառած մոմ առել լրել:

ՏԻԳՐԱՆ.—Վեր կենամ ի՞նչ անեմ, Մանան:

ՄԱՆԱՆ.—Տզամարդ չես դու, այլ իշի պոչ տրեխ, ցնցոտի:

ՏԻԳՐԱՆ.—Առանց այն էլ ինձ ծաղրում ես, որ ես փողերիդ վրա եմ պսակվել:

ՄԱՆԱՆ.—Ի՞նչ իրաւունքով ես այդ տաւա-

ԵՒ ցաւը քցել իմ գլխին, ի՞նչ իրաւունքով: (Ելաւ ոտքի): Այս բոպէիս վեր կաց ասա իրան՝ կինս յօժար չէ, իսկոյն դ՛ւրս եկ կորի այստեղից: Այդքան էլ լպտած, այդքան էլ անամօթ... Ի՞նչ ես իմ տունս հիւրանոց շինել, ուղտի ականջումը քնած, քամած տկնոր. քո երակներում ոչ թէ տղամարդի արիւն է հօսում, այլ թթու թան: Վեր կաց էլի՛, քաջ ես՝ ի՞նչ ես նստել:

ՏիգրԱՆ (Ելաւ, մօտեցաւ աջ դռան):—Այն, պարոն, ամօթը լաւ բան է, իմացէք ում հետ գործ ունէք: Ես թոյլ չեմ տալ, որ ձեր պատճառով իմ կինը գլխիս ընկոյզ կոտրի: Այս բոպէիս դ՛ւրս այստեղից: (Արշակ դռան ետեկ հաղաց, փախչելով): *Մանան*, դու ինձ բոլորովին կըխայտառակես. կարծեմ նա լսեց:

ՄԱՆԱՆ.—Ուրեմն դու նրա համար ես ասում, որ նա իր երկար ականջներով չլսի:

ՏիգրԱՆ.—Յետոյ նա ամեն տեղ կըտարածի, որ մենք զուրկ ենք հիւրասիրութեան ոգուց. մինչդեռ չպէտք է մոռանալ, որ պարկեշտութիւնը և հիւրասիրութիւնը Աստծոյ մեծագոյն պարզեն է:

ՄԱՆԱՆ.—Իսկ լսողները չեն անարգիլ մեզ, չեն կոչիլ մեզ անլեզու աւանակներ. ապուշն անգամ ձեր տեղ վաղուց նրան քշած կըլինէր:

ՏիգրԱՆ.—Այո, իրաւունք ունես, ամեն բանի չափ կայ ու սահման, ինչպէս և մեր համրերութեան: (Նորից): Այն, պարոն, առանց հրաւէրի հիւր զալ մի երիտասարդ զոյզի մօտ՝ անվայել և

կոպիտ բան է: (Լովեց Արշակի հաղոցը: Տիգրանը փախաւ նստեց): *Մանան*, երկի անպիտանը դուն ետեւից ականջ է դնում մեզ:

ՄԱՆԱՆ.—Եթէ դու վախենում ես, *Մանանը* չի վախիլ: (Աջ դռան հասցէին): Այն, պարոն, հըմ, իմ ամուսնու «ազգական»: Եթէ դուք վճռել էք անամօթ լինել, մենք էլ վճռել ենք խիստ լինել և խիզախ: Համեցէք, քանի որ ցախաւելով չեն քշել ձեզ, ինքներդ դիւցազնական պատւով դ՛հրուտ եկէք այս տեղից: (Քիչ մեց դուռը բացվի, լսեց և հազը: *Մանանը* փախաւ): Տիգրան, նա լսեց: (Նստեց տեղը վախեցած):

ՏիգրԱՆ.—Հիմա ի՞նչ անենք:

ՄԱՆԱՆ.—Ինչ կուզես արա. Էլ ինձնում սիրտ չմնաց:

ՏիգրԱՆ.—Զկանչենք Բօրօյին հետը կուեցնենք. նա շատ խորամանկն է:

ՄԱՆԱՆ.—Այո, նա հաւատարիմ է, ինչպէս շուն. կանչիր:

ՏիգրԱՆ.—Աւելի լաւ չէ, այդ աներեսի ներկայութեամբ հէնց ես ու դու մի լաւ կուենք: (Զանգակ):

ՄԱՆԱՆ.—Աըս... այդ նա է. ծառային է կանչում:

ՏիգրԱՆ.—Նախ մունջ կտրենք ու հետը ոչ չինչ չխօսենք:

ԲՕԲՈ (մի զոյզ կօշիկ ձեռքին, մտաւ միջի դռնով):—*Փող* պատռաստեցէք: Եսէկ ձեռ թանկազին «ազ-

զականի» սապրնն էու պոծել, այսօռ էլ կօշի
նեռկը:

ՄԱՆԱՆ.—Ինչու ես նեղացած, Բօրո:

ԲՕԲՈՒ-Հապա ի՞նչ է, աղջիկ պառն։ Առաջ
ասում էք չոռ գլուխ էք, եռեխայ չունէք և չէք
էլ ունենալու, յետոյ մէջտեղ էք քցում մի վայ-
ուենի էշի չափ եռեխայ։ (Զանգակի ջայն է տալիս աջ
դռան կողմը)։ Գալիս ենք, լմւ, շատ էլ մեծ սիրու-
ուզելիք չդառառ մեզ համառ։ (Ծնկով խփեց, աջ դռւ-
ութ բացեց)։ Համեցեք (Կօշիկները քցեց ներս)։ Էլ նեռկ
չկայ։ Կարող ես փողոցումը սովիել տալ, որ թըլսկ-
թիւկացնող լակոտնեոին մի 2 կապէկ օգուտ տաս։
(Մտաւ, աջ դռւռը բաց թողնելով)։

ՏԻԳՐԱՆ.—Սա մեզ բոլորովին կը խայտառակի. լսնեմ ես ինչ եղանակով է խօսում հետք:

ՄԱՆԱԿՆ.—Եւ շատ էլ լաւ է անում. կեցցէ
Բօրո: Ապրիս, դու մեղնից քաջ ես և համարձակ,
Այ տղամարդ, իսկ դու—ումըւմըւմըւ:

ԲՕԲՈ (մի գոյլ ջրով մտաւ աջից):—Էսքան տառ է ապոռւմ եմ աշխառհռւմ և, ճշմարիտ է, լեզ- գիրց միլիօնատէր չեմ տեսել, մալականից սափ- ռիչ և զօկից էլ գենեռալ, քայլ էդպէս էլ անա- մօթ հիւր չեմ տեսել: (Գնաց միջի գանով):

ՄԱՆԱՆ.—Օխ, կեցցէ Բօրօ. (օդային համբոյր) ը՛մ, ը՛մ, ը՛մ: (ևսից Արշակի անձունի ծայսով երդ մըս-մըսալը. «Անարատ կոյս, քո կարօտից մե-ուսասապայ...»):

Տեղաբան. — Հըմ, երգում է...

ՄԱՆԱՆ.—Եւ որքան խիղճը հանգիստ է....
Ո՞չ, սա մեզ ծաղրում է: Տէր Աստուած, ձայնին
նայեցէք... Ո՞չ, սա ինձ կըկատաղեցնի:

ԲՈՅՑ (դատարկ դոյլը ձեռին եկաւ. միջի դռնով,
բարկացած՝ ծնկով խփեց աջ դռան և շպռտեց դոյլն այնտեղ):
—Համեցէք. մինչ այսօն մի կապէկ շնչարուամ էլ
չես ձիստել ձեռքիս մէջանդին: Կառող ես ինքդ
գնել տեղը:

(Արշակի անհոգ ձայնը. «Ուրախութեամբ, Բօքո, ուրախութեամբ»):

Բօթօ (մտաւ աջ):—Նեռողութիւն, պառն. դեռ
շատ եռկանո պէտք է հիւր մնաս մեզ մօտ:

(Աբշակի ձայնը. «Կարող է պատահել, մի երկու այսքան էլ»):

ԲՅԲԾՕ (սարսափած յետ եկաւ և գուող ծածկեց):—
ԱՌ, աչքնեռող լոյս. «Եռկու այսքան Էլ»: Ո՞չ, նե-
ռեցէք. Էլ ես մնալ չեմ կառող. Ախ, անամօթ, նա
կառծում է ամեն բանի գինը անփոփոխ է մնա-
ցել, ինչպէս բուլկի գինը, որ մօոից ծնված օ-
ռիցս 5 կապէկ եմ տեսել, 5 կապէկ: Հաշիւ
տուեք: Էլ ես մնալ չեմ կառող: (Արշակի ձայնով):
«Աղջիկ պառոնդ և ազգականս ինձ պաշտում են»
ասում է: Ապա ձեզ եմ հացնում՝ էդ խօյեցի
ժանդառմի ինչն էք պաշտում: Ակունները թուռ-
քի հին գեռկղմանաքառերի նման մէկը գէս է գը-
նացել, մէկը դէս: Թշեռը դալմուխի և ոսկոռնեռը
ցցված (ցոյց տուաւ մատոններով): Աչքեռը մառդագէլի,
միտուքը կտոռած ուռախ շան պոչի նման, ուսեռը

վեռ եկած, ձայնը առջի օռնոց. ես չեմ իմանում
էր փոռսողը ոտաեղի՞ ձեռ ազգականը դուռս եկաւ է:

ՄԱՆԱՆ.—Հարցըու իրան (այսինքն ամուսնուն),

ԲՕԲՈ (ծածուկ Մասնակին):—Ի՞նչ կըլինի հոաւ-

մայես, թիակը առնեմ փսոռը դէն քցեմ:

ՏԻԳՐԱՆ.—Այդ ի՞նչ ես փնթփնթում:

ԲՕԲՈ.—Ոչինչ, էնպէս, սեկէտ է:

ՄԱՆԱՆ.—Խելօք Բօրօ, ես գիտեմ, որ դու
իմաստուն տղայ ես, որովհետև 4 հատ իմաստու-
թեան ատամ ունես:

ԲՕԲՈ.—Հոամեռես:

ՄԱՆԱՆ.—Աստծոյ սիրոյն, ոչոքի չյայտնես,
մի հնար գտիր, մեր օձիքն ազատիր էր վայրի
խոզից:

ԲՕԲՈ.—Հէնց էս ոռպէիս, վզակոթին տամ
էնպէս քշեմ, որ հոռ հառսանիքը միտ բեռի: (Աջ
դռան): Է՛յ, քսոստ շուն...

ՏԻԳՐԱՆ (բանեց իր գլուխը):—**ՄԱՆԱՆ...**

ՄԱՆԱՆ.—Սպասիր, Բօրօ, մենք էղպէս կո-
պիտ կերպով չենք ուզում:

ԲՕԲՈ.—Ա, հասկանում եմ (կոտրավելով),
այսինքն քաղաքավառի կեռողով. «պառոն զազգա-
կան, խնդռեմք զայտաղիցն զայնպէս կոռչեսջիք,
որ զշուաքնեոդ էլ չեռենացին»: (Լովեց Արշակի քայ-
լերի ձայնը):

ՄԱՆԱՆ.—Դէ հեռացիր, նա գալիս է: Յե-
տոյ, Բօրօ:

ԲՕԲՈ.—Ես գիտեմ թէ ինչ կանեմ: (Գնաց մի-
ջի ուսով):

ՏԻԳՐԱՆ.—Լոենք և չխօսենք հետք: (Լուռ
նստեցին):

Ճ Ե Ա Խ Լ 2.

ՄԱՆԱՆ, ՏԻԳՐԱՆ և ԱՐՃԱԿ

ԱՐՃԱԿ (մի անճոռնի արարած, մտաւ աջեց):—

Բարի լոյս, ազնիւ տիկին Մանան (ուժով խեց և
համբուրեց ձեռքը) և թանկապին ազգական (ուժով
սեղմեց ձեռքը), Ինչպէս էք: Լաւ քնեցիք: Ե՞ս: Շատ
լաւ: Հանգիստ, զուարձ, ինչպէս իմ տանը: Տի-
կին, խնդրեմ մի բաժակ թէյ: Շատերն ունեն շա-
քարի հիւանդութիւն, իսկ ես թէյի: Շաքարը շատ
լինի, ես քաղցր շատ եմ սիրում: Կաթն էլ մի
ինսայէք: Սակայն ինչժև նեղութիւն տալ ձեզ: Ես
հօ օտար չեմ, ես ազգական եմ: (Երդում է. «Մեռ-
նում եմ քո կարօտից, անարատ կո՞յս...»):
Թէյ ածեց, տարաւ փոքր սեղանիկի մօտ նստեց խմելու):
Տիուր էք երկում: Ուրբաթը ես էլ չեմ
սիրում: Սարսափելի վատ երազ տեսայ այս գի-
շեր:—Որպէս թէ անբաղդութիւնը կապիկ գար-
ձած, մի աչքը կոյր, մի հատ սկ կոտրված թեռվ,
եկաւ նստեց ձեր գոան. ինչքան քշեցի, չկորաւ:
Ես, ասում է, սրանց հետ գործ ունեմ: Հոգ մի
անէք, ազգական: Դժբաղդութիւնը մարգուս ան-
բաժան ընկերն է: (Լացակնած): Զափազանց զգա-
յուն է իմ սիրտը: Եթէ իմանաք, ով իմ հիւրա-

սէր, քաղցրաժպիտ և սիրալիր ազգականներ, որքան ցաւ և վիշտ է զգում նա այսուեղ ձեզ համար: Ոչ... ոչ... կեանքումս չեմ մոռանալու այս ուրբաթը: (Թաշկինակը տարաւ աշքերը սրբելու, թէյ խըմելով):

ՄԱՆԱՆ (ծածուկ):—**Տիգրան:**

Տիգրան (ծածուկ):—**Ի՞նչ է:**

ՄԱՆԱՆ.—**Ես վախնում եմ:**

Տիգրան.—**Ի՞նչի՞ց:**

ՄԱՆԱՆ.—**Նա ի՞նչ է ասում:**

Տիգրան.—**Գլուխը քարով է տալիս:**

ՄԱՆԱՆ.—**Չլինի՞ նա մեզ համար մի վատ լուր է լսել:**

Տիգրան.—**Կանայք սարսափելի անհամբեր են լինում:**

ՄԱՆԱՆ.—**Արդեօք չհարցնենք:**

Տիգրան.—**Մի փոքր համբերութիւն ունեցիր:**

ՄԱՆԱՆ.—**Բայց նա լալիս է, նայիր:**

Տիգրան.—**Այո, և թէյն էլ չի մոռանում:** Կամենում ես խօսիմ հետը:

ՄԱՆԱՆ.—**Գուցէ ակնարկներով նա կամենում է մեզ հասկացնել, որ մեզ մի դժբաղդութիւն է պատահել:**

Տիգրան.—**Նայիր, յետոյ մեղքը վրաս չըքցես:**

ԱՐՇԱԿ (ինքն իրան):—**Անզնութ ճակատագիր:** Եթէ զոհ էիր կամենում, հէնց իմ թանկագին ազգականիս դտար:

ՄԱՆԱՆ (ցած):—**Տիգրան:**

Տիգրան (նորսպէս):—**Ի՞նչ կայ:**

ՄԱՆԱՆ.—**Միթէ չես լսում:**

Տիգրան.—**Ի՞նչ:**

ՄԱՆԱՆ.—**Նա բացարձակ անաց, որ մեղ մի դժբաղդութիւն է պատահել:**

Տիգրան.—**Սխալ ես լսել:**

ՄԱՆԱՆ.—**Զէ, Աստուած վկայ. հարցը իւրան:**

ԱՐՇԱԿ (ինքն իրան):—**Անէծք հեռագիր հնարողի հօրն ու մօրը...**

ՄԱՆԱՆ.—**Տիգրան, շնուր, նա հեռագիր է ստացել:**

Տիգրան.—**Տես, յետոյ չզղջանք:**

ՄԱՆԱՆ.—**Ինչ կուզէ լինի, սիրտս տրաքվեց, շնուր արա:**

Տիգրան.—**Լաւ: Հըմ... պպարոն «ազգական»...**

ԱՐՇԱԿ.—**Ինձ հետ էիք, թանկագին ազգականս:**

Տիգրան.—**Դուք հեռագիր ունիք:**

ԱՐՇԱԿ.—**Այո:**

Տիգրան.—**Ամօթ չլինի, ինչի՞ մասին:**

ԱՐՇԱԿ.—**Ա՛խ, մի հարցնէք:**

ՄԱՆԱՆ.—**Ա՛, ա, ա...**

Տիգրան (Մանանին լաւ յանդիմանելով):—**Համբերիք մի փոքր:** (Արշակին), **Ի՞նչ է պատահել:**

ԱՐՇԱԿ.—**Ա՛խ, բերանս չի գալիս...**

ՏԻԳՐԱՆ.—ԴԺԲԱՂՊՈՒԹԻՒՆ Է պատահել...

ԱՐՇԱԿ.—Այո... տանից փող են պահան-
ջում: Ի՞նչ է, դուք ուրիշ բան կարծեցիք: Ի՞նչու
լոնցիք: Թէյից յետոյ ես էլ սովորութիւն ունեմ
լուս նստել և խորասուզվել մտքերի ծովի յատա-
կը: Դուք նմանպէս: Հիանալի սովորութիւն: Ու-
րիշ ի՞նչ պէտք է անէիք այս մերկանտիլ դարում:
Այո, ժամանակի անողոք ոգին եկել է յեղաշրջե-
լու ամենինչ: Եմանսսիպացիա, ըէվօլիւցիա, էքսպրո-
պրիացիա, էվօլիւցիա, պերտուրացիա, լէակցիա
և ակցիա: Ազատ է միմիայն մարդկային միտքը:
Գրականութեան մէջ տիրում է ամայութիւն, իսկ
լրագրութեան մէջ իրար միսկոծոտումն: Ամեն ոք
լաւագուրում է իր զուտիք: Մինչդեռ լրագրութեան
լեզուն պէտք է լինի ազնիւ, մաքուր և քաղա-
քավարութեան օրինակ, բայց մենք տեսնում ենք
անա ինչ:—իսկական զողի երեսին մենք չենք կա-
րող նրան գող անուանել, իսկ լրագրի միջոցով
ամենաազնիւ մարդուն էլ կարող ենք կոչել և
գող, և սրիկայ, և ինչ ուզէք: Զգուելի է յ տառի
աղաւաղված հնչիւնը: Փոխանակ կոպիտ և կոշտ
չիսու, չեսու և չուլիսի, պէտք է հնչել կակուղ
և փափուկ Յիսու, Յեսու և Յուլիս, այսինքն
այնպէս, ինչպէս նա հնչվում է այս բառի մէջ:
Այնպէս չէ, ազգականու ես տեսնում եմ դուք
ինձ հետ համաձայն էք, որովհետեւ լուսութիւնը հա-
մաձայնութեան նշան է: Պէտք է ասել ազնիւ տի-
կինս խիստ նուրբ գիտողութիւն ունի. իմանա-

լով ճաշակս, նա ինձ համար քաշում է սուպի ե-
րեսից, փլաւի տակից: Մի անգամ Հաշտարխան
հիւր եմ. բարի տանտիկինս հարցնում է՝ հաւա-
նեցիք արգեօք փլաւ: Ոչ, պատասխանեցի, աղը
շատ է, իւղը քիչ: Ազնիւ տիկինս, խնդրեմ այսօր
մի հաւ հանգստացրէք և մի փլաւ կենդանացրէք:
Այսինքն մի փլաւ՝ տակին հաւ: Կամենում էի ա-
ռաջարկել ձեզ հիմնել այստեղ մի համեստանիրաց
ընկերութիւն, բայց երբ տեսայ դուք այնպիսի
գլխարկներ էք գնում, որոնց մեծութեան առաջ
Բարելոնի աշտարակը կըկարմրէր, թողի: Հըմ,
այսօր ես տատրակ եմ դարձել: Եւ ինչպէս չոգե-
տորվել: Ի՞նչ ժպտուն դէմքեր էք ընդունել: Եւ
ինչպէս էլ լաւ բոնել էք ձեր գլուխները: Միքել
Անջէլօյի վրձինին արժանի պօզա: Զեմ կարող
չհամբուրել թանկագին ազգականիս ճակատը
(արաւ) և ազնիւ տիկնոջ ձեռքը: Շվէդները մի լաւ
խօսք ունեն՝ «Փեօրչիւսանդէ», այսինքն համ-
բուրարժան: (Առաւ Մանանի ձեռքը): Ո՛վ համբու-
րարժան ձեռք, որ թէկ չես կրում քեզ վրա օրհ-
նեալ աշխատանքի կնիքը, այսինքն կոշտուկներ,
և բնութիւնը չի շեղվել գեղարուեստի ճաշակից
տալով քեզ այդքան գեղեցկութիւն, թարմութիւն
և անուշահոտութիւն և եղունգների մաքրութիւն.
հվ—գուեհկորէն կասեմ,— պաշարժան թաթիկ, ե-
փիր այսօր իմ որովայնի համար մի հափփարժան
փլաւ: Գնամ բոլորը զրեմ յիշատակարանումս:

(Մոմուալով). «Մեռնում եմ, ով անարատ կոյս, քո
կարօտից...»: (Գնաց աջ):
 ՄԱՆԱՆ (աջ դռան):—Ես քեզ ցոյց կըտաժ
հափարժան փլաւը: Այսօր, Տիգրան, ծածուկ
մենք կըդնանք շոգենաւում ճաշելու: Ի՞նչ ես ուռել:
 ՏիգրԱՆ.—Ինչն ինձ խօսեցրիր նրա հետ:
 ՄԱՆԱՆ.—Դու լսեցիր ինչեր ասաց... (Աջ
դռան): Քար, երկաթ, փայտի կտոր... (Փախաւ տեղը):
 ԱՐՇԱԿ (եկաւ աջից յիշատակարանը ձեռքին):—
 Լաւ լսողին լաւ խօսող, ինչպէս և լաւ խօսողին
 լաւ լսող է պէտք: Ես ասում եմ, երեխային չը-
 պէտք է ներշնչել տիրութիւն: Մանուկը պէտք է
 ուրախ, զուարթ և զուարճ բաներ լսի: Իսկ ի՞նչ
 են սովորեցնում մեր մանուկներին:— մեր արիւնա-
 շաղախ պատմութիւնը: Իմ ինչին է պէտք, թէ
 ով էր այս և այն անձը: Ինչն ես պէտք է լամ
 և տիրեմ: Միթէ ես պէտք է յաւիտեան ապրեմ:
 Զէ որ այդ ամենը սեղմում է, ճնշում ազդի ուղեղը
 և թոյլ չի տալիս, որ միտքը սաւանի ազատ,
 անկաշկմնդ: Այդպիսի հանգամանքում հանճարներ
 չեն ծնվիլ և չեն զարգանալ փառքը և մեծութիւ-
 նը, ահա թէ ինչը կարող է ծնել հանճարներ: Յե-
 տոյ այդ հրէական պատմութիւնը, որ անուանում
 են չգիտեմ ինչպէս... Հըմ... ասացէք ինդրեմ,
 թանկագին ազգական, ով նէչման ասորին և ով
 ես: Ինձ ի՞նչ, որ մի ասորի նէչման քոսոտ է հ-
 ղել և բժշկւել: (Զբաղւեց գրելով):

ՏիգրԱՆ (յանկարծ թռաւ տեղից, կնոջը):—Ու-
 րեմն դուք ինձ ծաղրժւմ էք, այ՞ո:—
 ՄԱՆԱՆ (նոյնպէս):—Մանձահարիր լեզուդ:
 ՏիգրԱՆ.—Դուք ինձ համարում էք մի ա-
 ւազմկ, այ՞ո, այ՞ո:
 ՄԱՆԱՆ.—Շատ էլ ձայնդ մի բարձրացնիլ.
 Քեզնից վախեցող չկայ:—
 ՏիգրԱՆ.—Ի՞նչի՞ տեղ էք դնում ինձ:
 ԱՐՇԱԿ (քաշւեց մի կորմ):—Երբ մարդ ու կին
 կուռում են, երրորդը պահաս:—
 ՄԱՆԱՆ.—Բոլոր տունը տակն ու վրա կա-
 նեմ... բոլոր ափսէները կըկոտրեմ գլխիդ: Ինձ
 գիծ Մանան կասեն, իմացիր:
 ԱՐՇԱԿ.—Կեցցէ արկինս, կեցցէ, ի՞նչ քաջն
 էք եղել: Ինչպէս է, թանկագին աղջականս: Սկսում
 էք զիջել, այ՞ո. արդէն պարտութիւն, պասսաժ,
 համ համ համ:
 ՏիգրԱՆ (կնոջը):—Բանիցս ասել եմ ձեզ, ինձ
 հետ կուելիս ինձ «դուք» ասացէք:
 ՄԱՆԱՆ.—Չեմ ասելու:
 ԱՐՇԱԿ.—Տիկինը իրաւունք ունի. դգում է
 նա, ով սիրում է:
 ՏիգրԱՆ (կնոջը):—Ի՞նչն ինձ ծուռ աչքով նա-
 յեցիք:
 ՄԱՆԱՆ (ստքերը յատակին խփելով):—Լաւ եմ ա-
 րել, լաւ եմ արել, լաւ եմ արել:
 ԱՐՇԱԿ.—Այդ ինձ դուք եկաւ. (նմանեցրեց նը-
 րան) տրմտատատա, տրմտատատա, տրմտա-
 տատա:

ՏիգրԱՆ.—Ով համարձակվի ինձ ծուռ նա-
յել, ես նըան ողջ չեմ թողնիլ:

ԱՐՇԱԿ. — Արդար նկատողութիւն, աչքը տը-
րուած է մարդուն ուզիղ և ոչ թէ ծուռ նայելու
համար:

ՄԱՆԱՆ.—Համեցէք, եթէ քեզ հաճելի է ինձ զբարսելը, այս, ես քեզ միշտ ծուռ եմ նայել և ծուռ էլ նայելու եմ, և ինչո՞ւ ծուռ մարդուն ծուռ հնայել (արաւ):

ԱՐԾԱԿ.—Հա հա հա, այդ հիանալի էր (ա-
բաւ նոյնը):

ՏիգրԱՆ.—Իմ ինչս է ծուռ, անզգամ, անպատկան:


ԱՐԵՎԱԿ. — ՕՇ (ականջնելլը կապեց), աղքականս
մի քիչ տափն անզաւ:

ՄԱՆԱՆ կատաղեց). - Ասա, ինձ այդ տեսակ ծանր խօսքեր, ի՞նձ, ի՞նձ, ի՞նձ. ես մեռել եմ, դիակի՞ս վրա ես այդպէս հաշում... օգնեցէք, օգնեցք, օգնեցէք... մեռալ (թուլաղած ընկալա աթոռի վրա):

*ՏիգրԱն. — Ուշաթափութի՞ւն, դուք մեռաք,
սառահարձութիւն... Մանան, Մանան...*

ԱՐԾԱԿ (թևեց բռնեց):—Թող, ազգական. կանանց այդ շատ է պատահում. պէտք է մի երկու ըստէ հանգիստ թողնել նրան, և ամեն ինչ կանցնի: Սա մեր էստէրիկական դարի փոքրիկ սիւրպրիզներից է: Ասան և վերջացաւ: (Նստեցրեց, նստեց): Նա իսկոյն վեր կըկենայ: (Պառւզայ)

ՄԱՆԱՆ (ելաւ):—Այդպիէս ուրեմն, այդպիէս,



անսառակ: Շատ լսու: Ես այսուհետեւ այդպէս էլ կը լինեմ...

ՏիգրԱՆ.—Ես կը յայտնեմ իշխանութեան,
որ դուք քրէական յանցանք էք գործում... որ
դուք չէք կամենում երեխայ ունենալ, մինչդեռ
Միհացեալ Նահանգների նախագահն այդ մասին
օրէնք է դրել. նա զոյգ ունեցող ծնողներին շնոր-
հաւորում է:

ՄԱՆԱՆ.—Իսկ ես չեմ ուզում, չեմ ուզում,
չեմ ուզում:

ԱՐԴԱԿ.—Հոգ մի անէք, այժմս մօղա է՝ նախ չպսակվել. եթէ պսակվել, զաւակ չունենալ. իսկ եթէ ունենալ, գոնէ քիչ ունենալ:

ՏիգրԱՆ. — Ուրեմն դուք երեսներիդ ամօթիքողութեամբ պատուիմ էք:

ՄԱՆԱՆ.—Այս, այս, այս, պատռում եմ:
ՏԻԳՐԱՆ.—Իսկ եթէ ես, իբր ձեր գլխի տէր

և իշխանը, հրամայեմ ի կարգ՝
ՄԱՆԱՆ.՝ Ես քեզ կը պատասխանեմ ահա ին-
չով (բառձուացեա մի ափսէ):

Տիգրան. — Ի կարգ:

ՄԱՆԱՆ. — Այ քեզ կարգ, ահա քեզ կարգ,
ահա քեզ կարգ (բաեզ կոտրեց ափսէներ):

ՏիգրԱն. — Այս բովէիս ես ձեզ կըակ կը-
տամ, կըսպանեմ: (Պասց ձախու)

ՄԱՆԱԿ. -ԱՌԻ, ԱՍՏՈՒԹՅՈՒՆ (Կողմ): ԱՆՎԻՄԱՆ
ՆՐ ՄԵՂԻՑ ԷԼ ՃԻ ՀԱՐԺՎՈՒՄ: (Բարձր): ԻՆԿ Եթէ ՆԱ
ԻՒՆ ԱՎԱՆԻ:

ԱՐՇԱԿ.—Խնչակէս չէ, հեշտ է կնիկ սպանելը:
ՄԱՆԱՆ (ձախ դռան):—Ահա իմ կուրծքը, խոր-
փիր, սպանիր. ես կըմեռնեմ, բայց կըմեռնեմ
քաջութեամբ: (Մի բան փնտռելով, գնաց աջ դռնով):

ԱՐՇԱԿ.—Պէտք է ասել՝ ընտանեկան կուրը
այն հսոցն է, որի մէջ եփվում է ապագայ եր-
ջանկութեան և սիրոյ օղակը:

ՏԻԳՐԱՆ (մտաւ ձախից ատրճանակ ձեռին):—Ո՞ւր
կորար դու:

ԱՐՇԱԿ (կանգնեցրեց նրան):—Վաշինգտոն, ան-
գլիացոց դէմ, Մարատ, Միրարօ, Թիէր, Գամ-
բետտա, Գարիբալդի, Ղառնդ երէց:

ՏԻԳՐԱՆ.—Ո՞ւր ես, իմ կին, մւր ես, Մա-
նան:

ԱՐՇԱԿ.—Խնայեցէք, ազգական, նա ծակուռ
է մտել:

ՏԻԳՐԱՆ.—Ո՞ւրտեղ փախար, ով անզգամ:

ՄԱՆԱՆ (դռան եռքից):—Ես այստեղ հմ, ով
անպիտան:

ՏԻԳՐԱՆ.—Ա՛, ուրիշ երիտասարդի սենեա-
կում:

ՄԱՆԱՆ (սոյնպէս):—Այսուհետեւ ինձ այդպէս
կըտեսնես:

ԱՐՇԱԿ.—Բայց ես ուրիշ չեմ, ես ազգական եմ:

ՏԻԳՐԱՆ.—Միակ այդ բանն էլ բաւական է,
որ ես սպանեմ ձեզ:

ԱՐՇԱԿ.—Արժէ արդեօք այդ չնչին բանի
համար:

ՏԻԳՐԱՆ.—Այստեղ համեցէք:

ՄԱՆԱՆ (մտաւ աջից մի գառելափայտ բարձրաց-
րած):—Ի՞նչ կայ:

ՏԻԳՐԱՆ.—Ազօթեցէք:

ԱՐՇԱԿ.—Ապա, ապա, ազգական. Յ քայ-
լից, մէկ, երկու, երեք. պաֆ, պաֆ, պաֆ:

ՏԻԳՐԱՆ (բարկացած՝ Արշակին):—Զեզ Բալ խըն-
դրեց խառնվել մեր կուին:

ՄԱՆԱՆ (բռնեց).—Տիգրան, Աստծոյ սիրոյն,
չսպանես մարդուն:

ՏԻԳՐԱՆ (Մանանին):—Թողլ ինձ, թողլ, ա-
սում եմ:

ՄԱՆԱՆ (արգելելով նրան):—Զեմ թողնիլ:
(Բարկացած՝ Արշակին):—Զեզ ի՞նչ, որ խառնվում էք
մեր կուին:

ՏԻԳՐԱՆ (արգելեց).—Մանան, Աստծոյ սի-
րոյն, փայտով չջարդես մարդու գլուխը:

ՄԱՆԱՆ.—Ոչ, ոչ... ովակ չտաս սպանես:
(Արգելում են երար):

ԱՐՇԱԿ.—Հըմ... այ քեզ դրութիւն:

ՄԱՆԱՆ.—Ի՞նչ դրութիւն:

ՏԻԳՐԱՆ.—Ի՞նչ դրութիւն:
ԱՐՇԱԿ.—Այսօր ես պէտք է ձանապարհ-
վէի... բայց քանի որ դուք այդպէս կուսում էք,
կարող եմ ձեզ թողնել. Յետոյ ետևիցս չէք ասիլ՝
անպիտան, հիւրասիրութիւններս վայելից, իսկ
մեզ չհաշտեցրեց, փախաւ գնաց:

ՄԱՆԱՆ.—Տեսնում ես, Տիգրան, դու քո ան-

հեռատեսութեամբ խեղճ հիւրի ճանապարհը կըտրեցիր. ով գիտէ խեղճը ինչ հարկաւոր գործ ունի, անյետաձգելի, վռազ, սարսափելի հարկաւոր գործ:

ԱՐԴԱԿ.—Ի՞նչ պէտք է անես. գնամ հեռագրեմ, որ ինձնից անկախ պատճառով ստիպված եմ մնալ ևս 2—3 ամիս. (Գնաց աջ):

ՄԱՆԱՆ.—Տեսմբ. քո յիմարութիւնդ մէջտեղ չքցէիր, այսօր ևեթ կըգնար կըկորչէր այստեղից:

ՏԻԳՐԱՆ.—Այս ըոպէիս նրան կըկանչեմ և կասեմ. պարոն հըմ... «ազգական», համեցէք, Աստուած բարի ճանապարհ տայ:

ՄԱՆԱՆ.—Այո, համեցէք. մենք չենք ուզում պատճառ դառնալ, որ դուք կործներդ թողնէք. այսուհետեւ մենք երգում ենք խաչ ու աւետարանով, որ այլ ևս երբէք չենք կուիլ, երբէք:

Ց Ե Ա Խ Լ 3.

ՄԱՆԱՆ, ՏԻԳՐԱՆ, ԲՈԲՈ, ՆԻԿՈԼ և ԱՐՃԵԿ

ՆԻԿՈԼ (կանցի շորով, թշերը կարմրացրած, գեռքեմի ետեռում):—Ես նրան կըսպանեմ, ճանկոտելով կըհանեմ աչքերը. կոծոտելով կըպոկեմ քիթն ու պոռւնկները. Ո՞ւր է իմ սիրեկանը, մուր է իմ սիրեկանը:

ԲՈԲՈ (բեմի ետեռում):—Այս աղջիկ, ամօթ է, զսպիր քեզ, Աստծոյ սիրոյն:

ՆԻԿՈԼ.—Դէն կաց, անպիտան (միջի դուսն

զեր քցեց Բօբօյին և մտաւ ներս): Ես ամօթ-բան չեմ հասկանում: Ո՞ւր է իմ սիրեկանը:

ԲՈԲՈ (ոտքի ելաւ):—Հայ քո էսէնցը, էսէնցը...

ՆԻԿՈԼ (Տիգրանի առաջ կնիկսէն և այլն):—Ա՛խ, ներեցէք, պարոն, ես, ես, ես...

ՏԻԳՐԱՆ.—Բօբօ, ով է այս աղջիկը և ի՞նչ է ուզում:

ԲՈԲՈ.—Աստուած ոչ գիտէ նրա գլուխը:

ՆԻԿՈԼ.—Ա՛, երեի դժու ես տիկին...

ՄԱՆԱՆ.—Ի՞նչ էք կամենում:

ՆԻԿՈԼ.—Ի՞նչ եմ կամենում. տներ ինձ իմ սիրեկանս: Ինչո՞ւ ես խլել նրան իմ ձեռից. Էս երկու տղամարդը քեզ բաւական չէր:

ՏԻԳՐԱՆ.—Բայց, օրիորդ, նա իմ կինն է, զգուշացնում եմ քեզ:

ՆԻԿՈԼ.—Քո կի՞նը: Դէն հրամայիր, այս ըովէիս իմ սիրեկանիս հանի իրա պահարանից:

ՏԻԳՐԱՆ.—Ի նչ է ասում... Ո՞վ է սրա սիրեկանը, Մանան:

ՆԻԿՈԼ.—Եա է, որին երեք շաբաթ է ծամը կտրած կինդ խլել է ձեռքիցս և բերել խոթել իրա կամողը և քեզ խարում է:

ՏԻԳՐԱՆ.—Տէր Աստուած... Սրա խելքը գըլւիին է, Բօբօ, ինչեր է բարբանջում սա, մըտեղից գտար սրան:

ԲՈԲՈ.—Զեր հսամանոց քոսոտ դէմքով աղականին է ուզում էլի:

ՏիգրԱՆ.—Դէ էլ ի՞նչ աղմուկի բան է, կանչ
մի՞ր իրան դայ էլի՞:
ՆԻԿՈԼ (կատաղած ուզեց, յարձակւել աջ դռան
վրա):—ԱՌ, ուրեմն այստեղ է (խլեց Մանանի ինձդա-
կոթը):

ԲՕԲՈ.—Աղջի, ի՞նչ ես կատաղած շան նման
վռաներս գոռն տալիս, սպասիո կանչեմ էլի:

ՆԻԿՈԼ.—Ես չեմ համբերիլ, չեմ համբերիլ:

ԲՕԲՈ.—Պառն ազգական, պառն ազգական,
այստեղ համեցէք:

ԱՐՇԱԿ (եկաւ աջից):—Ի՞նչ է, Բօրօ:

ԲՕԲՈ.—Էլ ի՞նչ պէտք է լինի. տես էս քածը
ի՞նչ է ուզում մեզնից:

ԱՐՇԱԿ.—Օրինրդ, ի՞նչ էք կամենում:

ՆԻԿՈԼ.—ԱՌ, մեռնեմ դէմքիդ. սիրոս գը-
նաց: Անսաստուած, անողորմ, ահա թէ որտեղ ես
փախել. վերջապէս ես քեզ գտայ: Կշտացէլ ես
ինձնից, համ: Ուզում ես ինձ յուսահատութեան
դժուը հասցնես, որ ես ինձ ջուրը քցեմ խեղդեմ,
այ՞ս, այ՞ս, այ՞ս:

ԱՐՇԱԿ.—Ի՞նչե՞ր է խօսում այս զիժը:

ՆԻԿՈԼ.—Հիմա նատօդ զիժ դարձաւ, համ:
Իսկ երբ որ կըծքիդ էիր սեղմում, թշերս կծո-
տում, իմ անզին նատօ էիր ասում, էն ժամանակ
խելօք էի: Թողէք կրակ տամ սրան (ուզեց ծնկա-
շուը բարձրացնել, զթողին):

ԱՐՇԱԿ.—Խելագարվածի մէկն է սա...

ՆԻԿՈԼ.—Վայ, Արշակ, հոգիս, որտիս կտա-

ըը, գեղեցիկ դէմքիդ մատաղ, Նատօյի անզին սի-
րեկանը... Ախ, մէկ եկ է, մէկ եկ կարօտո առ-
նեմ է:

ՄԱՆԱՆ (բարկացած՝ Արշակին).—Ուրեմն դուք
այդպիսի ազնիւ մարդ էք եղել. խեղճ աղջկան
թշուառացը ել էք և ինքներդ փախէլ:

ՆԻԿՈԼ (Մանանին).—Ախ, ես քո էդ քաղցրիկ
լեզուդ ուտեմ: (Լալով): Ուուու...

ՏիգրԱՆ (Արշակին).—Եւ դուք կասէք սա
ազնիւ արարմժնաք է:

ԲՕԲՈ.—Ես քո հօռ ծառան էի, օռեկան
ուեք անզամ ձոփ կօշիկ էիս սորել տալիս ինձ:

ԱՐՇԱԿ.—Բօրօ, դու լո՛ր, դու քո վարձդ
կըստանաս այ որտեղ (ցոյց տուաւ երկինք):

ԲՕԲՈ.—Խնդում էնտեղ ինքդ համեցէք անես,
ՆԻԿՈԼ.—Մէկ հարցըէք ի՞նչու է ինձ թողել:

Միթէ ոյլովէս շուտ պառաւեցի: (Պատվեց սրանց
առաջ): Համեցէք նոյեցէք և խղճմտանքով դատե-
ցէք: Ահա, սա մէջքս, սա ետքս, սա առաջս, սա
ուսս, սա էլ դուսս, սիթէ ես պառաւ հմ:

ՏիգրԱՆ.—Ի՞նչպէս ես համբարձակվում... Բօ-
րօ, դուրս քցիր սրան:

ՆԻԿՈԼ.—Ոչ ոք նատօյին չի համարձակվիլ
դուրս քցել այստեղից: Որտեղ իմ սիրեկանս, էն-
տեղ էլ ես: (Չոելով ոտքերը հեծաւ աթոռի վրա այնպէս՝
որ զրկեց աթոռի մէջքը): Դէ թնդ տեսնեմ ինձ ով է
դուրս քցում: (Գնչուհու աներեսութեամբ զոռալով):
Վայ, Արշակ, միրուքիդ մեռնեմ, էդ օձի խորա-

մանկ աչքերիդ մեռնեմ, տես Նատօյիդ ի՞նչ օրի
ես քցել, որ երեսի ամօթը մոռացած, կարօտիցդ
էրված, կատաղած շան նման փողոցներն ընկած՝
քիչ էր մնում սրանբա երեսը կծոտիթ: ԲՇմ, վկայ
է Աստուած, որ ինձ քեզնից սատանան էլ չի կա-
րող բաժանել:

ԱՐԾԱԿ.—Բայց ես սրան չեմ էլ ճանաչում,
Աստուած վկայ:

ՆԻԿՈԼ.—Վայ, մի՞ երդվիլ, անունիդ մատաղ.
քո Նատօյիդ չեմ ճանաչում, մէջքս տրորում էիր,
խուլխուլիկս ծծում, հիմի աչքերդ ինձ չեն կա-
րողանում ջոկել: Ա՛խ, ներս ընկած վզիդ մատաղ,
Արշակ. մէկ եկ է, մէկ եկ կարօտս առնեմ է:
(Գնում է Արշակի գրա, նա փախչում է):

ՄԱՆԱՆ.—Ֆի, միթէ օտարի տան մէջ կա-
րելի է այս տեսակ խայտառակութիւններ սար-
քել, ֆի՞ւ:

ՏԻԳՐԱՆ.—Խնդրեմ, պարոն, հեռացրէք ձեր
սիրեկանին այստեղից և վերջ դրէք այս խայտա-
ռակութեան:

ԱՐԾԱԿ.—Տէր, մեղայ քեզ...

ՆԻԿՈԼ.—Ա՛խ, Բօրօ. հիմա ի՞նչ անեմ, ուր
փախչեմ. էս ըռպէիս որտեղ որ լինի, իմ ջրա-
տար մարդս կը գայ այստեղ:

ՄԱՆԱՆ.—Ա.խ, անտմօթ, նա մարդ էլ է ու-
նեցել:

ՆԻԿՈԼ.—Եւայն էլ ի՞նչպէսը... Բօրօ, դու հօ
ճանաչում ես էն ծուռ քթով, ներքեկ պոոշը

վերև գնացած, արշին ու կէս դաշոյնը կողքից կախ,
միս մորթող Շաքարին:

ԲՕԲՈ.—Է՞ն որ սափոթչի մօտ եռեսին սա-
պսն քսած նստած է՞ու:

ՆԻԿՈԼ.—Հա: Էս ըռպէիս նա կը գայ:
վնաս չունի, թող գայ, ինձ էլ սիրեկանիս: Էլ
էստեղ շանսատակ անի:

ԲՕԲՈ.—Օհօ հօ հօ. ուռեմն նա է քո մառդը,
էն կշեռքումը մառդ խարողը. նա հօ շուկայի
գուրեննատոնն է: Օ՛, Աստուած ազատի, շատ չառ
մառդ է:

ՆԻԿՈԼ.—Ա՛խ, աղջիկ պարոն, որքան հմ խա-
րել խեղճին, որքան: Ալշակը երեկաները կառքը
բերում էր կանգնեցնում, իսկ ես հօրանցս տունը
պատրուակ էի բերում, տնից փախչում:

ԱՐԾԱԿ.—Ամենալկուի սուտ, հաւատաց-
նում եմ ձեզ:

ՆԻԿՈԼ.—Ա՛խ, անգնեթ Արշակ, ի՞նչ քաղ-
ցրութիւններ ենք վայելել... մէկ եկ է, մէկ եկ է:
(Գնաց Արշակի գրա, նա փախաւ): Ուսւ... փախչում
է ինձնից, ուռունւ...

ՄԱՆԱՆ.—Մի լար, խեղճ աղջիկ, մի լար:
(Գըկեց նրան):

ՆԻԿՈԼ.—Ա՛խ, իմ քաղցրիկ քոյրիկս. ինչպէս
չլամ. մարմալաղի նման մարմինս է ծծել, շողո-
լաղի նման աչքերս, էլ տեղ չի թողել, որ չկապ-
տացնի, ահա (ուզեց ցոյց տալ) համեցէք, չէք հաւա-
ռում, տեսէք (ուզեց քակել կրծքի կոճակները):

ՄԱՆԱՆ.—Զէ, չէ, չէ, ամօթ է, նատօ. մենք
քեզ հաւատում ենք: ԽԵղճ, թշուառ, խարված,
անարգված աղջիկ: (Դրկեց):

ՆԻԿՈԼ (համբուրելով):—ԱՌիս, շնորհակալ եմ,
քոյրս, միսիթարում ես ինձ:

ԲՕԲՈ (այդ պատկերից հիացած հոհում է):

ՏԻԳՐԱՆ. —Ի՞նչ ես իշուկի նման հոհում.
Կորիր այստեղից:

ԲՕԲՈ (Սքակին):—Կը գնամ նատօյի մառ-
դուն կը կանչեմ:

ԱՐՃԱԿ. —Սպասիր, Բօրօ. Աստծոյ սիրոյն,
իրերս հասցրու երկաթուղիի կայարան: (Դրամնեց
փող տալով նրան, քաշեց նրան, գնացին աշ):

ՄԱՆԱՆ.—Տեսնում ես ինչ անգութ մոլո-
րեցնողն է եղել ազգականդ:

ՏԻԳՐԱՆ. —ԱՌիս, Մանան, ամենալկտի, անա-
մօթ անպիտանը:

ՆԻԿՈԼ. —Ես մարդիս ինչ պատասխան տամ,
ունեմ...

ՄԱՆԱՆ. —ԽԵղճ, անրանդ նատօ (համբուր-
գեցին): Գնա երեսդ լուացիր, սիրելիս (ցոյց տուաւ
ձախ դուռը):

ՆԻԿՈԼ. —Աստուած ձեր կեանքը երկարացնի:
(Գնաց ձախ):

ՄԱՆԱՆ (կողմ):—Թռւ, անպիտանի բերնից
գինիի և ծխախոտի հոտ է փչում:

ԲՕԲՈ (աջ կողմից մտաւ ճամպրուկ և այլ իրեր
ձեռքին, ինչոր փող նայեց և դրեց զբանը, դեպի ժողո-

գուրդը ձայն առւաւ):—Թայշտօն, ֆայտօն: (Գլխով ա-
րաւ): Իսկոյն քշիր փողոցի դուռը: (Գնաց միջի դը-
նով):

ԱՐՃԱԿ (պայուսակ կցով, գլխարկի արկղ և այլն
ձեռին եկաւ աջից):—Դէ մնաք բարով, աղնիւ տի-
կին և թանկագին ազգական:

ՏԻԳՐԱՆ. —Ի՞նչպէս, դուք գնամ էք, Մենք
երբէք չենք թողնիլ: Մանան:

ՄԱՆԱՆ.—Ախ, ի հարկէ. մեր թանկագին
հիւր և ազգական, ես այսօր պատրաստում եմ
իսկ ձեր սիրած փլաւը: Ո՞չ, ոչ, ոչ, մենք ձեզ
չենք թողնիլ, երբէք:

ԱՐՃԱԿ. —Բայց ես գործ ունեմ, պէտք է
շտապիմ:

ՏԻԳՐԱՆ. —Դատարկ պատրուակներ, մենք
ձեզից հեշտութեամբ չենք բաժանվիլ ոչ:

ԱՐՃԱԿ. —Բայց ես...

ՏԻԳՐԱՆ. —Եւ ոչ մի խօսք... դուք մեզ վի-
րաւորում էք:

ԱՐՃԱԿ. —Բայց չէ՞ որ ես արդէն պատրաստ
եմ... իրերս էլ գնացին:

ՄԱՆԱՆ.—Մենք իսկոյն կը վերադարձնենք,
այն: Ի՞նչպէս, չյարգել մեր խնդիրը. ես երբէք
չէի սպասիլ այդպիսի անակնկալի, այդ ինչի՞ է
նման: Տիգրան, մի՞թէ դու կը թողնես:

ՏԻԳՐԱՆ. —Երբէք... դու ինքդ մեզ խոստա-
ցար կրկին Յ ամիս մնալ մեզ մօտ:

ԱՐՇԱԿ.—Բայց ես կատակ էի անում, Աստուած վկայ:

ՏԻԳՐԱՆ.—Դատարկ խօսքեր. վերջապէս կարող է պատահել, որ մարդ ու կին, մենք նորից կուենք: Ո՞վ պէտք է հաշտեցնի մեզ:

ԱՐՇԱԿ.—Ախ, խնդրում եմ... ես հաւատացած եմ, որ էլ չէք կուիլ, որովհետև հաշտութիւնն է մայր բարեաց:

ՄԱՆԱՆ.—Տեսնում էք, դուք հիմա էլ չէք մոռացել ձեր երկելի խօսքերը. ինչպէս դուք անվերջ խօսում էիք, իսկ մենք լուռ ու մուռջ աշկանչ էինք դնում ձեզ:

ԱՐՇԱԿ.—Բայց էլ պաշարս վերջացաւ:

ՄԱՆԱՆ.—Ոչ, հազար անգամ, ոչ. ով պէտք է անոյշ ձայնով մեզ համար երգի (երգեց). «Ես կարօտից կըմեռեմ, անարատ կոյս»: Երգեցք խնդրեմ:

ԱՐՇԱԿ.—Ա՛խ, Աստծոյ սիրոյն, ի՞նչ երգելու ժամանակ է:

ՄԱՆԱՆ (բռնեց նըան):—Զէ, պիտի երգէք:

ՏԻԳՐԱՆ (նոյնպէս):—Գոնէ պատմեցէք իմ ինչ ազգականն էք դուք:

ԲՕԲՕ (միջի դռնից):—Պառոն ազգական, միս մոռթող Շաքոսն եկաւ, Կառքը պատուաստ է, շնուտ: (Գնաց):

ԱՐՇԱԿ. —Ա՛... բաց թողէք: (Կորզից, փախաւ միջի դռնով):

ՏԻԳՐԱՆ.—Դէ էլ ի՞նչ ես կանգնել, Մանան,

Աստուած ինքն է ուղարկել այդ Նատոյին մեզ օգնութեան, գնա վգովն ընկիր, մի լաւ համբուրիբ:

ՄԱՆԱՆ.—Ախ, նա չինէր, փրկութիւն չկար: Նատօ, սիրուն Նատօ, իմ աննման Նատօ (ասելով գնաց ձախ):

ՏԻԳՐԱՆ.—Օ՛Փ (նստեց), փառք Աստծոյ, վերջապէս ես ինձ իմ տան մէջ ազատ զգացի:

ՄԱՆԱՆ (բռաւելով եկաւ ձախից):—Ա՛...

ՏԻԳՐԱՆ.—Ի՞նչ պատահեց:

ՄԱՆԱՆ.—Անպիտանն այնպէս ախորժակով կծոտում էր, ինձ, այնպէս փաթաթվում, քաշքում ինձ, որ վախեցայ:

ՏԻԳՐԱՆ.—Է՛հ, ի՞նչ վախենալու բան է, ուրիշ հօ չէ, մեր անամօթ Նատօն է էլի:

ԲՕԲՕ (մտաւ միջի դռնով):—Աչքնեռդ լոյս, էնպէս կոռաւ, որ հետքն էլ չէք դոնիլ:

Ց Ե Ս Խ Լ 4.

ՏԻԳՐԱՆ, ՄԱՆԱՆ, ՆԱՏՕ, ԲՕԲՕ և ՋԼԻՔԱՐ

ՇԱՔԱՐ.—Է՛հէէէյ... Ո՞վ կայ այստեղ:

ՏԻԳՐԱՆ.—Տէս այդ ի՞նչ ձայն է, Բօբօ:

ԲՕԲՕ (նայեց միջի դռնով, յետ եկաւ):—Փախէք, փախէք, Շաքոսն է: (Երեքով կուչ եկան մի կողմ):

ՇԱՔԲՈ (մտաւ միջի դռնով, սաւանը վզին, կէս երես սափրած, կէսը սապնած, մերկ դաշոյն ձեռին):—Է՛յ,

խողի ձագեր, որտեղ էք թաքցրել եմ կնկանս։
մւր է էն անզգամը, մւր է իմ կնիկը։

ՏԻԳՐԱՆ. — Ո՞վ ես դու, ով մարդ։

ՇԱՅԲՐՈ. — Մասմորթ Շաքրօ կասեն ինձ. ես
եմ կնկանս խարողի գլուխը սոխի նման կը թըռ-
ցնեմ։ Ո՞ւր է էն կապը կտրածը։

ՏԻԳՐԱՆ. — Ո՞ւմ էք հարցնում։

ՇԱՅԲՐՈ. — Որպէս թէ չես իմանում։ Տեսնող-
ներ են եղել, որ իմ կնիկս այստեղ է թաքնված։
Սափրիչի մօտից եմ վազել արիւնը գլխիս է տա-
լիս, շնուր արէք, թէ չէ, Աստծոյ մէկ անունը վկայ,
էս բոպէիս այստեղ մի այնպիսի արիւնհեղու-
թիւն կանեմ, որ ովկիանոմների ջրերը կը կար-
մըն։

ՄԱՆԱՆ. — Քո կնկայ անունն ի՞նչ է։

ՇԱՅԲՐՈ. — Այս կտրվի նրա անունը. Նատօ է
էլի, չէք լսել։ Խե Նատօ կասեն։

ՆԻԿՈԼ (եկաւ ձախից) : — Ո՞ւր է իմ սիրեկանը,
մւր է։

ՇԱՅԲՐՈ. — Աշ, սիրեկան ես՝ ունեցել, սիրե-
կան ես կորցրել, սիրեկան ես վինտում։ (Դաշոյնը
բարձրացրեց)։ Այս բոպէիս բռնեցէք անզգամին,
միջից կէս անեմ։ Դէ հա շնուր։

ԲՕԲՈ. — Հա հա հա...։

ՇԱՅԲՐՈ. — Եիրը, անզգամ, ինչու ես ծիծա-
դում. (սպառնաց) ու...։

ԲՕԲՈ. — Շաքրառ հոռելլայո, սա հօ մեռ ֆը-
ռանդ ՆԻԿՈԼ է։

ՇԱՅԲՐՈ. — ՆԻԿՈԼ... տօ, տօ, տօ, ՆԻԿՈԼ. Էդ
դորթ դժու ես, ՆԻԿՈԼ։

ՆԻԿՈԼ. — Ի՞նչ է, աչքիդ չես հաւատում։
(Գլխարկը և կեղծ մազերը հանեց)։ Հը, թէ չես հաւա-
տում։ (Վարդիկի գրպաննց հանեց ծխախոռ, դիեց բերնին)։

ՇԱՅԲՐՈ. — Ֆրանդ, որ Փրանդ։ Տօ ՆԻԿՈԼ, այ
խողի ծնունդ, տեսինչչէս էլ նմանեցրել է իմ կըն-
կանս։ Ախր ես իմ մաքուր կաթնակեր նատօյին
չեմ ճանաչնում։ Վայ ես նրա հոգուն մատաղ։ Թիւ-
ձեր երեսին։ (Սպառնաց)։ Հնւ, ես ձեզ մարդ ասո-
ղին... մէկ էլ էսպէս բաներ էք արել, ամենքիդ էլ
կը կոտորեմ, ուրբո... (Դաշոյնով ամենքին ցըելով, փա-
խաւ միջի դռնով)։

ՄԱՆԱՆ (Բօբօյին) : — Սա որ ՆԻԿՈԼն է եղել,
ինչու չես ինձ զգուշացրել։

ՏԻԳՐԱՆ (նրա հետ միասին ՆԻԿՈԼին) : — Դու որ
Նատօն չես եղել, ինչու ես իմ կնկանս կծոտել։
(Երկուսով երկար վազեցնում են մէկը նոյն փայտով, միւսը
ատբանակով մինչ վարագոյր)։



Digitized by srujanika@gmail.com

Գիշեալ է 25 կուպէն

Պահապար թիվին՝ «Անտրոնական» և «Գումա-
տինըրերք» զբաղածառնոցներում, Բագու «Սօս-
րուզնիկ»:

Մոյն տեղերում մի-մի զործողութեամբ պիչունիք՝

«Միկի Խորոնիք» 20 կ.
«Խուզակուր Մինու» 20 կ.

Տաղաքրում են մի-մի զործողութեամբ պիչունիք՝

«Վիզի Վաշնոր»
«Հայոց օպերիսիոն»
«Պուշկինուր»

Հեղինակի հայոց

Խաչիստան ո/դ. Ալ. Աբելին,

ՀՀ Ազգային գրադարան



NL0322460

16.647